ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ
«Էջմիածին» հանդեսի գլխ. խմբագիր

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻ ԱՐԽԻՎԸ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Ներածություն. *Դժվար է գտնել օտարազգի մեկ այլ հայագետի, ով ավելի խորն է զգացել Հայաստանը, քան ակադեմիկոս Նիկողայոս Մառը (1864-1934 թթ.)[1]: Դրա պատճառը թերեւս այն է, որ մեծ գիտնականը հայ մշակույթին ծանոթանում էր ոչ միայն գրադարաններում ու թանգարաններում, այլեւ հայոց երկրի դաշտերում ու լեռներում, լքված ավերակներում՝ ուղղակիորեն շփվելով հողին, ջրին եւ պարզապես՝ հայ մարդուն: Եւ այս ամենը փայլուն արտացոլված է մի կողմից նրա գիտական աշխատանքներում[2], մյուս կողմից՝ Անիի ավերակների միջավայրում թրծված դպրոցում (Ն. Ադոնց, Գ. Ղափանցյան, Ա. Քալանթար, Հ. Օրբելի), որը մինչ օրս շարունակում է մնալ չգերազանցված:*

Մառի գիտական գործունեությունը սովորաբար բաժանվում է երկու հիմնական փուլի, որոնց սահմանը 1920-ական թթ. սկիզբն է: Առաջին փուլը ներառում է նրա գիտական բուռն գործունեության շրջանը.

---

[1] Խորին շնորհակալություն ենք հայտնում Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արխիվի սանկտ-պետերբուրգյան բաժանմունքի տնօրեն *Բ. Տունկինային*, նույն հաստատության Նյութական մշակույթի պատմության ինստիտուտի տնօրեն *Վ. Լապշինին*, ինչպես նաեւ արխիվի աշխատակիցներ *Մ. Մեդվեդեվային* եւ *Տ. Երշովային*՝ Ն. Մառի՝ հիշյալ հաստատություններում գտնվող արխիվում 2015 թ. աշնանը մեր իրականացրած աշխատանքում ցուցաբերած աջակցության եւ նյութերի հրապարակումը թույլատրելու համար: Շնորհակալություն ենք հայտնում նաեւ հայագետներ *Ա. Բոզոյանին*, *Ալ. Հակոբյանին* եւ *Հ. Հակոբյանին* այս հոդվածն ընթերցելու, օգտակար դիտողությունների եւ խորհուրդների համար: Աշխատանքներն իրականացվել են հուշարձանագետ *Կ. Բայրամյանի* հետ միասին, ով հրատարակության է պատրաստում Մառի արխիվում գտնվող եւ Ա. Քալանթարին վերաբերող նորահայտ նյութերը (դրանց այս հոդվածում չենք անդրադառնում):

[2] Հմմտ. հատկապես՝ **Н. Я. Марр,** К вопросу о задачах арменоведения, Журнал Министерства народного просвещения, 1899, № CCCXXIV, էջ 242-250. **Н. Я. Марр,** Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915. **Н. Я. Марр,** Кавказ и памятники его духовной культуры, Петроград, 1919. **Н. Я. Марр,** Армянская культура, ее корни и доисторические связи по данным языкознания, Ленинград, 1941.

ավարտելով Ս. Պետերբուրգի համալսարանի Արեւելյան լեզուների ֆակուլտետը (1888 թ.), աշակերտելով Ֆ. Պատկանյանին եւ ընկերակցելով Ստ. Մալխասյանին[3]՝ Մառը պաշտպանում է մագիստրոսական (1899 թ.), ապա եւ դոկտորական (1901 թ.) թեզեր՝ հընթացս գործունեություն ծավալելով որպես բանասեր, պատմաբան եւ հնագետ: Խորհրդային կարգերի հաստատումով Մառը ծանրաբեռնվում է վարչական աշխատանքով՝ լինելով Նյութական մշակույթի պատմության ռուսական (1926-ից՝ պետական) ակադեմիայի եւ Հաբեթական ինստիտուտի (1919-1934 թթ.), ինչպես նաեւ Պետական հանրային գրադարանի (1924-1930 թթ.) տնօրեն, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ (1930-1934 թթ.), ինչից, բնականաբար, տուժում է նրա գիտական գործունեությունը: Նա անցնում է տեսական-ընդհանրացնող հետազոտությունների, որի արդյունքում առաջանում է «հաբեթական» տեսությունը[4]:

Այստեղ հարկ է նշել, որ Մառը մշտապես ջերմ հարաբերություններ է ունեցել հայ մտավորականության եւ հայկական կազմակերպությունների, նաեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ՝ հաճախ այցելելով Էջմիածին եւ աշխատելով մատենադարանում, զեկուցելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանում[5]: Էջմիածնականները նույնպես այցելել են Մառին Ս.

---

[3] Այս մասին տես **Հր. Աճառյան,** Կյանքիս հուշերից, Երեւան, 1967, էջ 225. **Г. С. Харатишвили,** Кавказоведение в Санкт-Петербургском университете и его преподаватели, Вестник Санкт-Петербургского государственного университета, 2014, № 13/4, էջ 42-43:

[4] Մառի կյանքի եւ գործունեության մասին չգերազանցված է մնում նրա կենսագիր Վ. Միխանկովայի աշխատանքը, որը գրված է գլխավորապես արխիվային նյութերի հիման վրա՝ **В. А. Миханкова,** Николай Яковлевич Марр: очерк его жизни и научной деятельности, Москва-Ленинград, 1949: Նոր հրապարակումներից հմմտ. **В. М. Аплатов,** История одного мифа: Марр и марризм, Москва, 1991. **О. Д. Голубева,** Н. Я. Марр, Санкт-Петербург, 2002. **Н. И. Платонова,** История археологической мысли в России (Вторая половина XIX - первая половина XX века), Санкт-Петербург, 2010: Հայ հեղինակների անդրադարձներից հմմտ. **Ա. Մովսիսյան,** Ն. Յա. Մառի կյանքը եւ ստեղծագործությունը, Երեւան, 1946. **Հ. Հ. Կոստանյան,** Նիկողայոս Յակովլեվիչ Մառ, Երեւան, 1965. **Բ. Ն. Առաքելյան, Ս. Տ. Երեմյան, Պ. Մ. Մուրադյան (խմբ.),** Մառը եւ հայագիտության հարցերը, Երեւան, 1968. **Պ. Մուրադյան (խմբ.),** Ակադեմիկոս Նիկողայոս Մառ. ծնունդյան 140 եւ մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, Երեւան, 2005. **Է. Մ. Շիրինյան,** Առաջաբան եւ ներածություն, Ն. Մառ, «Արքաուն». քրիստոնյաների մոնոզոլերեն անվանումը հայ բաղկեղոնականների խնդրի առնչությամբ, Երեւան, 2016:

[5] 1899 թ. ամռանը Մառը գալիս է Էջմիածին՝ Մայր Աթոռի գրադարանում աշխատելու եւ Դվինում հնագիտական աշխատանքներ ձեռնարկելու նպատակով (**К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра о разведочной раскопке Двина в 1899 г., ВОН, 1982, № 4, էջ 92): Այս ընթացքում Կարապետ վարդապետի հետ այցելում է Բյուրականի կաթողիկոսական ամառանոց, որտեղ էին գտնվում նաեւ ճեմարանի դասախոսներ Հովի. Հովհաննիսյանը եւ Հր. Աճառյանը: Հր. Աճառյանի եւ Մառի ծանոթությունը առիթ է հանդիսանում, որ վերջինս մասնակցի Արտաշատի/Դվինի պեղումներին (**Հր. Աճառյան,** Կյանքիս հուշերից, էջ 222-226. Հր. Աճառյանի՝ Դվինի պեղումներին եւ Էջմիածնի

Պետերբուրգում եւ Անիում[6]*, որը մեծ հետազոտողի երկրորդ տունն էր, եւ, ի դեպ, Մայր Աթոռի սեփականության տարածքում էր գտնվում՝ վերահսկվելով Միքայել վրդ. Տեր-Մինասյանի կողմից*[8]*: Մառին վերաբերող բազմաթիվ անդրադարձներ են եղել «Արարատ» եւ «Էջմիածին» հանդեսների էջերում*[9]*:*

Մառի չհրապարակված ժառանգությունը. Մառն ունեցել է բեղուն գրիչ. նրա հրատարակված աշխատանքների թիվը մոտենում է 600-ի[10]*: Եւ սա այն դեպքում, երբ Մառի նյութերի (լուսանկարներ, գծագրեր, օրագրեր, բնագրեր) զգալի մասը կորել է 1917 թվականին. Մառը դրանք Պետրոգրադից ուղարկել է Թիֆլիս՝ Կովկասյան պատմա-հնագիտական ինստի-*

շրջանում հետազոտական աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ հիշողություն է պահպանվել Մառի՝ Ս. Պետերբուրգի արխիվի օրագրերից մեկում, որի մասին տես **Ա. Քալանթարյան,** Հրաչյա Աճառյանը հնագետ, Հրաչյա Աճառյանին նվիրված միջազգային գիտաժողով, Երեւան, 1994, էջ 47):

[6] 1907 կամ 1908 թթ. Անի է գնում Կոմիտաս վարդապետն իր երգչախմբով: Մայր Տաճարում՝ Ն. Մառի, Հ. Օրբելու, Թ. Թորամանյանի, Հ. Մանանդյանի եւ այլոց ներկայությամբ Կոմիտասը մատուցում է իր մշակած պատարագը (ի դեպ՝ առաջին անգամ), որից հետո Մառը մոտենում է Կոմիտասին եւ ասում. «Էջմիածնում եւ Թիֆլիսում ես շատ պատարագների եմ ներկա գտնվել, շատ երգչախմբերի եմ լսել, բայց այսպիսի պատարագ առաջին անգամ եմ լսում... Կարծես դարավոր տաճարը, ամբողջ Անին էր մասնակցում սրբազան երգեցողությանը» (**Ս. Կուրտիկյան,** Կոմիտասյան ողողանջներ, Երեւան, 1969, էջ 22-24. **Ան. եպս. Ժամկոչյան,** Կոմիտաս, Երեւան, 2007, էջ 46):

[7] **К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра о раскопках в Ани (1892 г.), ВОН, 1981, № 5, с. 101.

[8] **К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра о раскопках в Ани (1904-1907 гг.), ВОН, 1981, № 10, էջ 105. Կայսերական հնագիտական հանձնաժողովին 1905 թ. գրված մի նամակում Մառը խնդրում է Միքայել վարդապետին տրամադրել մեկ հրացան՝ Անին պահպանելու նպատակով (անդ): Միքայել վարդապետի մասին տես **Ա. Վրույր,** Անիում, Երեւան, 1979, էջ 8-17:

[9] Տես հիշյալ հանդեսների մատենագիտական համապատասխան ցանկերը. **Ս. Կոծիկյան,** Մատենագիտություն «Արարատ» ամսագրի (1868-1919), Ս. Էջմիածին, 1970. **Ս. Կոծիկյան,** Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1944-1973), Ս. Էջմիածին, 1975. **Արարատ քին. Պողոսյան,** Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-2008), Ս. Էջմիածին, 2012:

[10] Դրանց թիվը 1933 թ. 507 էր (**Н. Я. Марр,** Избранные работы, т. 1, Ленинград, 1933, էջ XI-XXVI), 1965 թ.՝ 563 (**Հ. Հ. Կոստանյան,** Նիկողայոս Յակովլեվիչ Մառ, էջ 72). այսօր այն հասնում է գրեթե 600-ի: Դրանցից մոտ 180-ը զուտ հայագիտական բնույթի են (**Հ. Հ. Կոստանյան,** նշվ. աշխ., էջ 72, ցանկը եւ թեմատիկ-վիճակագրական բաժանումը՝ էջ 73-97): Հրապարակվել են "Избранные работы", т. 1-5, Ленинград, 1933-1937. Մառի կաբինետը 1930-1940-ական թթ. նպատակ է ունեցել հրատարակել եւս հինգ հատոր (**В. А. Миханкова,** Работа кабинета Н. Я. Марра за 1934-1944 гг., Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры, 1947, № 15, էջ 82-85), սակայն այդ ծրագիրը զարգացում չի ունեցել: Նպատակ է դրվել Մառի երկերը հրատարակել նաեւ հայերեն, սակայն լույս է տեսել միայն առաջին հատորը՝ **Ն. Յա. Մառ,** Ընտիր երկերի ժողովածու, հ. I, Երեւան, 1949:

տուտ՝ արխիվ ստեղծելու նպատակով, սակայն նյութերը տեղ չեն հասել[11]: Նյութերի մյուս հատվածն էլ կորել է թուրքերի կողմից Անիի 1918 թ. գրավման ընթացքում[12]. այսուհանդերձ, Մառից պահպանված եւ չհրապարակված նյութերի քանակը խիստ տպավորիչ է[13]:

Մառի արխիվը գտնվում է Ս. Պետերբուրգի երկու հաստատություններում՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արխիվի սանկտ-պետերբուրգյան բաժանմունքում (ՌԳԱ ՍՊԲՄ = СПФ АРАН ձեռագրային արխիվը) եւ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Նյութական մշակույթի պատմության ինստիտուտում (ՌԳԱ ՆՄՊԻ = ИИМК РАН՝ լուսանկարչական արխիվը): Երկու արխիվներն էլ նախապես գտնվել են Նյութական մշակույթի պատմության ինստիտուտում[14]: Դեռեւս իր կենդանության օրոք՝ 1932 թ., լուսանկարների մի մասը գիտնականը հանձնել էր հիշյալ ինստիտուտի լուսանկարչական արխիվ, իսկ մյուս մասը, արդեն Մառի մահվանից հետո՝ 1935-1936 թթ., ձեռագրերի հետ մեկտեղ, նրա այրին փոխանցել էր նույն ինստիտուտում գտնվող «Ն. Յ. Մառի կաբինետ» (սկսել է գործել 1936 թ.), որը հայագետի նյութերի զետեղարանն էր եւ հետազոտության կենտրոնը[15]: Ակադեմիայի արխիվի սանկտ-պե-

---

[11] Համապատասխան նյութերը կորել էին՝ դրանց երկաթուղով տեղափոխման ընթացքում՝ «Արմավիրի եւ Բաքվի միջեւ» (**E. Choisnel,** Le parcours de N. Marr, de l'archéologie arménienne à la linguistique "japhétique", Cahiers de l'ILSL - Département des langues et des sciences du langage Université de Lausanne, 2005, № 20, էջ 66)՝ մասնավորապես ոմբակոծվելով/թալանվելով «Շամխոր կայարանում» (**Н. И. Платонова,** Николай Яковлевич Марр - археолог и организатор археологической науки, Археологические вести, 1998, № 5, էջ 377), կամ «Ռոստովի եւ Արմավիրի միջեւ» (**Т. Девель, Д. Томес,** Собрание Н. Я. Марра в фотоархиве ленинградского отделения Института археологии АН СССР, ИФЖ, 1971, № 3, էջ 289), կամ «Բաքվի եւ Պետրոգրադի միջեւ» (**Д. П. Гордеев,** Общий очерк истории жизни КИАИ за 10 лет, Бюлетень кавказского историко-археологического института, Тифлис, 1928, № 4, էջ 7): Միայն Անիին վերաբերող կորած լուսանկարների թիվն անցնում էր 2000-ից (**Г. Н. Чубинов,** Отчет анийского музея древностей за 1916 г., Анийские древности, Петроград, 1918, № 3, էջ 2):

[12] **Н. И. Платонова,** նշվ. աշխ., էջ 377-378:

[13] Մառի չհրատարակված աշխատանքների ամբողջական ցուցակը երբեք չի հրապարակվել (հմմտ. սակայն **В. А. Миханкова,** Николай Яковлевич Марр, էջ 516-537, ուր բերված են միայն «հակիրճ տվյալներ» համապատասխան ցուցակի վերաբերյալ):

[14] 1930-ական թթ. Լենինգրադում արխիվների մասնագիտացումն ուժեղացվեց, մասնավորապես մշակույթի պատմությանը, հնագիտությանը, հուշարձանների պահպանությանը վերաբերող նյութերը կենտրոնացվեցին Նյութական մշակույթի պատմության ինստիտուտում (**И. В. Тункина (ред.),** Фонды и коллекции Санкт-Петербургского филиала архива Российской академии наук: краткий справочник, Санкт-Петербург, 2004, էջ 9-10):

[15] **Г. В. Длужневская,** Фонды фотоархива Института истории материальной культуры РАН, Восточный архив 1, 2014, էջ 87. **О. Д. Голубева,** նշվ. աշխ., էջ 85: Մառի կաբինետի գործունեության մասին տես **В. А. Миханкова,** Работа кабинета Н. Я. Марра за 1934-1944 гг., էջ 77-86 (այնտեղ պահվող ձեռագրային եւ լուսանկարչական նյութերի

տերբուրգյան բաժանմունք դրանց ձեռագրային հատվածը հանձնվել է 1950 թ.՝ նույն ինստիտուտի կողմից[16]*:*

Այդ նյութերին ծանոթանալու համար 2015 թ. աշնանը այցելեցինք Ս. Պետերբուրգ: Մասնավորապես մեր առջև դրված էր երկու խնդիր՝ ա. ընդհանուր առմամբ ծանոթանալ Մառի հայագիտական ժառանգությանը, բ. կենտրոնանալ այն նյութերի վրա, որոնք վերաբերում են Մառի 1909-1912 թթ. գործունեությանը Հայաստանի բարձր լեռնային գոտիներում (Գեղամա լեռներում): Վերջին՝ մեր հիմնական հարցադրմանը կանդրադառնանք այլ առիթով, մինչդեռ այս հաղորդման նպատակն է ընդհանուր գծերով ներկայացնել Մառի արխիվի ներուժը[17]*: Նշենք, որ արխիվում տարիներ*

նկարագրությամբ): Ի դեպ, 1943 թ. սկսած, «Մառի անվան կաբինետ»-ներ են գոյություն ունեցել նաև Հայաստանում, մասնավորապես՝ Երևանի պետական համալսարանի Բանասիրության ֆակուլտետում (Գր. Ղափանցյանի գլխավորությամբ, հրապարակել են «Ն. Մառի անվան կաբինետի աշխատությունները»՝ 1945 (թ. 1), 1947 (թ. 2), 1948 (թ. 3), Պատմության ֆակուլտետում (Հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության ամբիոնին կից), ՀՀԳԱ Լեզվի և Արևելագիտության ինստիտուտներում: Դրանցից այսօր պահպանվել է միայն Արևելագիտութեան ինստիտուտի «Ն. Մառի անվան կովկասագիտության կաբինետը», որի համապատասխան ֆոնդը պարունակում է մոտ 1000 կտոր գրականություն (բոլորը Մառի անձնական օրինակներն են), որոնք Երևան են բերվել Ս. Պետերբուրգից 1988 թ.՝ ինստիտուտի տնօրեն Գ. Սարգսյանի և ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի տնօրեն Յու. Պետրոսյանի պայմանավորվածությամբ և Պ. Մուրադյանի ու Լենինգրադի բաժանմունքի՝ Մառի անվան Կովկասի կաբինետի արդեն նախկին վարիչ Կ. Յուզբաշյանի նախաձեռնությամբ: Գործի առիթը Մառի հիմնադրած Կովկասի կաբինետի փակման հանգամանքն էր: Գրականությունն առանձնացրել և ուղարկել են Ալ. Հակոբյանը և Ա. Բոզոյանը: Ընդ որում, արխիվային նյութերը թողնվել են տեղում և տեղափոխվել Մառի լենինգրադյան արխիվ: Հայաստան բերելու համար ընտրվել են հիմնականում այն հրապարակումները, որոնցում մեծանուն գիտնականը կատարել է սրբագրումներ: Նպատակը Երևանում Մառի գիտական աշխատությունների հատորային հրապարակումն էր. մինչ այժմ հրապարակվել է միայն մեկ հատոր՝ **Н. Я. Марр,** Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995 (Ալ. Հակոբյան և Ա. Բոզոյան, անձնական հաղորդում, 25.11.2016 և 11.12.2016, Երևան):

[16] Մառի կաբինետը հայտնի պատճառներով փակվում է, իսկ նյութերը փոխանցվում են Գիտությունների ակադեմիայի արխիվ (**Б. Б. Пиотровский,** Страницы моей жизни, Санкт-Петербург, 1995, էջ 274): Բացի արխիվից, կաբինետում էր գտնվում նաև գիտնականի մոտ 15.000 միավորանոց գրադարանը (**В. А. Миханкова,** Работа кабинета Н. Я. Марра, էջ 86), որը նույն 1950 թ. փրկվեց Հ. Օրբելու շնորհիվ, ով գրքերը տեղափոխեց Ասիայի ժողովուրդների ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի Օրբելու անվան կովկասագիտական կաբինետ (**П. Мурадян,** Неопубликованная статья Н. Я. Марра об “Арк’ауне”, ИАН, 1964, № 12, էջ 57):

[17] Արխիվային մատյանների հեղինակային գրառումներից, մեր հարցումներից և առկա հրապարակումներից (տես ստորև) պարզվում է, որ հայ հեղինակներից Մառի ձեռագրային և լուսանկարչական արխիվում հիմնականում աշխատել են Պ. Հակոբյանը, Վ. Հարությունյանը, Ստ. Մնացականյանը, Պ. Մուրադյանը, Կ. Յուզբաշյանը, Դ. Քերթմեջյանը և այլք: Արխիվի հայագիտական նյութերի մասին միակ ընդհանուր անդրա-

ГАИМК
Кабинет Н. Я. МАРРА
№ 2933 л. 2

163

№ 26. 1888. Գրություն եղիսաբեթի (տեսուչ-
հրաշեղեն) Դալոյ Սիմոնի հայաստեան. մասի
Օ սպորեալ զեմլաի, պրինադլեժաշչի
Կեղարտեսկոմ մոնաստիրյու.

№ 27. 1888 с Каджи-юрдъ", և մյուս
մոտ՝ Ֆաջի-юрдъ-սչ պրուդոմ Թոխմախ-
хань гелъ", և այլն. Հայի թանգարանը
պրոշուրդի Դմիտրոյ

№ 251. ~~Արա. թեքեր~~ Ալ 4 պրոտոկոլ Սրեվ
եպիս. Վարդան՝ "Здѣсь вопросъ о спариваемыхъ
земель Гегардскаго монастыря Вн. губернаторомъ
1888.

Полевой Журналъ обхода границъ Эриванскаго
округа монастыря св. Егварта, имѣющій
отнош. на планшетѣ Ю. 42. 43. З. 2. 3. 4. 5.
(Землемѣръ Тифлисскій Меликовъ 19-го авг.
1885), стр. 2: „По заявленію настоятеля Вар-

„Курдскаго (лежит)"

Նկ. 1. Մառի ձեռագիրը. «Դուրսգրումներ Էջմիածնի գրադարանի նյութերից՝ վիշապների փնտրտուքին առնչվող աշխատանքների կապակցությամբ», ՌԳԱ ՍՊԲՄ, ֆ. 800, ց. 1, մ. 2933, թ. 2ա

2об

тана Вартанянца монастырь этими лесами пользуется болѣе 25 лѣтъ на правѣ полной собственности, а по заявленію Прокурора[1] это мѣсто составляетъ часть лѣтнихъ пастбищъ Ново-Баязетскаго уѣзда", въ этихъ границахъ и Тохмаканъ-гель"

№442. Въ Эчмиадз. Вард. В-на: Рпубликачъ.

32. Копія резолюціи Эрив. Окружнаго суда отъ 1888 г. 11-го окт.: „участокъ, называемый Ганлы-юртъ, въ означенномъ на планѣ границахъ, признать собственностью монастыря св. Кегварта"

35. Копія резолюціи. Участокъ Ганлы-юртъ, продолж., подъ названіемъ Тохмаканъ-гель, про-

[1] Прокурора окружнаго суда.

Նկ. 2. Մառի ձեռագիրը. «Դուրսգրումներ Էջմիածնի գրադարանի նյութերից՝ վիշապների փնտրտուքին առնչվող աշխատանքների կապակցությամբ», ՌԳԱ ՍՊԲՄ, ֆ. 800, ց. 1, մ. 2933, թ. 2բ

շարունակ աշխատել է Մառի ժառանգության լավագույն գիտակ Պ. Մուրադյանը[18]*: Արդեն 1960 թ. Հ. Օրբելին առաջարկել է վերջինիս ձեռնարկել Մառի հրատարակված եւ ձեռագիր աշխատանքների հրապարակումը, ինչի մասին հեղինակը գրում է. «Հետազոտելով Ն. Յ. Մառի արխիվը՝ մենք ավելի ու ավելի ենք համոզվում ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու առաջարկի արդիականության մեջ»*[19]*: Սակայն նշանավոր կովկասագետը հասցրեց հրատարակել միայն առանձին ձեռագրերը (տե՛ս ստորեւ): Հուսով ենք՝ մոտ ապագայում կգտնվեն մասնագետներ, ովքեր կշարունակեն այս կարեւոր գործը:*

Ձեռագրային արխիվը. Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արխիվի սանկտ-պետերբուրգյան բաժանմունքը երկրի ամենահին գիտական արխիվն է (հիմնադրվել է 1728 թ.) եւ իր գոյության գրեթե 300-ամյա ընթացքում կուտակել է նշանավոր գիտնականների (օրինակ՝ Ի. Կեպլերի, Մ. Լոմոնոսովի, Ն. Միկլուխո-Մակլայի, Ն. Վավիլովի, Վ. Բարտոլդի եւ այլոց) կյանքին ու գործունեությանը վերաբերող նյութեր: Արխիվն ունի 750 ֆոնդ, 478292 գործ, որոնք վերաբերում են ԺԵ. դարից մինչ մեր օրերն ընկած ժամանակաշրջանին եւ բաժանվում են երեք խմբի՝ հաստատությունների ֆոնդեր, անհատական ֆոնդեր, արխիվային հավաքածուներ[20]*: Անհատական ֆոնդերի մեջ № 800-ը պատկանում է Մառին եւ ընդգրկում է հիմնականում 1881-1934 թթ. վերաբերող նյութերը (աղ. 1):*

դարձն առկա է **Հ. Հ. Կոստանյան,** նշվ. աշխ., էջ 100-110 (հեղինակը նույնպես աշխատել է ձեռագրային արխիվում եւ իր հիշատակած 111 միավորից 32-ն անձամբ է տեսել):

[18] Համապատասխան աշխատանքներից հմմտ. **Π. Мурадян,** Крупнейший служитель отечественной науки (к 120-летию со дня рождения и 50-летию смерти акад. Н. Я. Марра), КВ, 1988, № VI, էջ 5-13. **Π. Мурадян,** Материалы к научной биографии акад. Н. Я. Марра, КВ, 1988, № VI, էջ 276-290. **Π. М. Мурадян,** Н. Я. Марр - основоположник научного кавказоведения, в кн.: Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995, էջ 9-14.

[19] **Π. Мурадян,** Неопублокования статья Н. Я. Марра об "Арк'ауне", էջ 49-50: Նույն տեղում հեղինակը նշում է, որ նա 1960-ական թթ. սկզբին արխիվում աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի հանձնարարությամբ՝ Մառի՝ հայ հին գրականության մասին դասախոսությունները նախապատրաստելով հրատարակության՝ վերջինիս 100-ամյակի կապակցությամբ:

[20] Արխիվի պատմության և անհատական ֆոնդերի նկարագրության համար տես. **Г. А. Князев** (ред.), Личные фонды ученых в Архиве АН СССР: список, Москва-Ленинград, 1959. **Г. А. Князев** (ред.), Архив Академии наук СССР. Обозрение архивных материалов, том. V / вып. 19, Москва-Ленинград, 1963. **И. В. Тункина,** նշվ. աշխ.: Բյուզանդագիտական նյութերի համար հմմտ. նաև՝ **И. П. Медведев** (ред.), Архивы русских византинистов в Санкт-Петербурге, Санкт-Петербург, 1995. **И. П. Медведев** (ред.), Рукописное наследие русских византинистов в архивах Санкт-Петербурга, Санкт-Петербург, 1999:

Հայագիտության համար հետաքրքրություն ներկայացնող, չհրապարակված նյութերը հիմնականում **Ձեռագրերի № 1 հավաքածուում** *են եւ վերաբերում են պատմությանը, հնագիտությանը, բանասիրությանը, ձեռագրագիտությանը, վիմագրագիտությանը: Այստեղ են զետեղված նաեւ այն կարծիքները, որոնք Մառը գրել է իր աշակերտների եւ գործընկերների համար: Դրանց մեծ մասը նշումներ են, դուրսգրումներ, անավարտ կամ ավարտուն հոդվածներ, դասախոսություններ, օրագրեր, գրքերի հատվածներ, որոնց հիմնական մասը, համապատասխան թեմատիկ բաժանմամբ, ներկայացնում ենք այս հաղորդման մեջ:*

Հավաքածուի №-ը	Հավաքածուի անվանումը եւ նյութերի բովանդակությունը	Նյութերին վերաբերող սահմանային թվերը	Միավորների քանակը
1.	Ձեռագրեր	1881-1934	3182
2.	Ն. Յ. Մառի նամակները	1884-1934	58
3.	Նամակներ Ն. Յ. Մառին	1887-1934	1599
4.	Կենսագրական նյութեր	1860-1950, 1960, 1965	332
5.	Թերթային հոդվածներ եւ լրագրային կտրածներ	1905-1934	8
6.	Այլոց աշխատանքներ	1887-1934	763
7.	Դուրսգրումներ եւ տեղեկատվական նյութեր, որոնք արված են այլ անձանց կողմից Ն. Յ. Մառի աշխատանքների համար	անթվակիր	18
8.	Ն. Յ. Մառի լուսանկարները եւ նկարները	1920-ականներ, 1931, 1935	15
9.	Հուշ-առարկաներ	1933-1939, անթվակիր	7

Աղյուսակ 1.
Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի արխիվի սանկտ-պետերբուրգյան բաժանմունքի Ն. Մառի № 800 ֆոնդի բովանդակությունը

Պատմություն եւ հնագիտություն. «Հայկական ժողովրդական ավանդությունը Տիգրան Հայկազնի կամ Տիշտար աստվածության մասին» (հոդված եւ նյութեր), «Մ. Խորենացու Պատմությունը» (ելույթ «Հայ Արշակունիները եւ Մ. Խորենացու պատմությունը» քննարկման եւ Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» ատենախոսության ժամանակ), «Դուրսգրումներ հայոց պատմության, հին հայ աշխարհագետների վերաբերյալ» (նշումներ), «VII-XI դդ. հայ պատմիչները» (նշումներ), «Կիլիկյան շրջան. սկզբաղբյուրները» (ցուցակ), «Այցելություն Հայաստան, 1893 թ.» (օրագիր), «Ռուսական Հայաստանի հնությունները եւ Ռնակի դամբարանադաշտի պեղումները» (օրագիր), «Անիի պեղումները եւ շրջակայքը, 1892, 1893, 1904-1907 թթ.» (օրագրեր), «Վանա լճի շրջան

իրականացած գիտարշավը, 1916 թ.» (նյութեր), «Երերույքի բազիլիկան, V-VI դդ. Հայկական տաճարը Անիի շրջակայքում» (նյութեր), «Գիտարշավներ Զվարթնոց, 1893 թ.» (նշումներ), «Գառնիի պեղումները» (օրագրեր), «Գործուղում Ադրբեջան, Վրաստան, Հայաստան, 1924 թ.»:

Բանասիրություն. «Կովկասյան ժողովուրդների գրականություն (հայեր եւ վրացիներ)» (հոդված), «Հայ-վրացական գրական առնչություններ» (նյութեր), «Դիտողություններ հայ-վրացական ազգանվանաբանության, տեղանվանաբանության, ազգագրության վերաբերյալ» (նյութեր), «Կովկասյան աշխարհի հետազոտության ներածություն» (դասախոսություն), «Հայկական գրքային հեքիաթներ՝ «Հայկական միջնադարյան գրականության պատմության համար» (նյութեր), «Աղվեսագրքի արաբական տեքստը» (ցանկ), «Հին հայկական ժողովրդական ավանդազրույցները եւ դրանց աղբյուրները (առասպելական)» (նշումներ), «Նյութեր հայկական բանաստեղծական հանգի, միջնադարյան Հայաստանի բանաստեղծների վերաբերյալ» (նյութեր), «Հայ գրականության սիրիական շրջանը» (նյութեր), «Հին հայկական գրականություն» (դասախոսություններ եւ նյութեր), «Սիրիա-հայկական բառամթերք, հայ-վրացական լեզվական ընդհանրություններ, զենդ-հայկական կապեր» (նյութեր), «Հայկյան եւ հայերեն լեզուները. տեսական եզրակացություններ (լեզվաբանական)» (նյութեր), «Բառերի եւ արտահայտությունների ցանկ, որոնք սխալ են բացատրված կամ բաց են թողնված բառարաններում» (նյութեր), «Մոկսի, Արճեշի եւ Բուլանըխի բարբառները» (նյութեր), «Հայերեն եւ վրացերեն այբուբենները» (հոդվածի հատված, նյութեր), «Հայկական բարբառագիտություն» (նշումներ դասախոսությունների համար), «Նոր գրական հայերենի քերականությունը» (նշումներ դասախոսությունների համար), «Հայերի հին գրավոր լեզուն» (դասախոսություն), «Խալդերեն լեզվի քերականություն» (դասախոսություն), «Հին հայկական նավարտադրության եզրերի ստուգաբանությունը» (հոդված):

Ձեռագրագիտություն. «Էջմիածնի ձեռագրերը» (նկարագրություն), «Հին հայկական տեքստ. հույն իմաստունների ասույթները ըստ ձեռագրերի եւ հրատարակությունների» (ցանկ), «Երուսաղեմի հայկական ձեռագրերը» (ցուցակներ, նկարագրություններ, նյութեր, լուսանկարներ), «Սբր Ռ. Կերզոնի հավաքածուի հայկական ձեռագրերը» (նկարագրություն), «Փարիզի ազգային թանգարանի հայկական ձեռագրերի տեքստերը» (նկարագրություն), «Լենինգրադի Հանրային գրադարանի հայկական ձեռագրերը» (նկարագրություն), «Ներսեսի եւ Խաղ եպիսկոպոսի պատմությունը Էջմիածնից», «Ս. Կյուրեղի նահատակության սիրիական եւ

հայկական տարբերակները», «Հակոբ Ցուրտավելու Շուշանիկի վարքը», «Գարեգին Հովսեփյանի կողմից հայտնաբերված նոր հայկական ձեռագրերը» (զեկուցում):

Վիմագրագիտություն. «Նոր նյութեր հայկական վիմագրագիտության վերաբերյալ», «Դաշ-Քերնիի արձանագրությունները» (դիտողություններ, դուրսգրումներ), «Զըլդըրի արձանագրությունը» (լուսանկար), «Կըզըլ-Կիլիսեի հայերեն արձանագրությունը», «Խալդյան արձանագրությունները եւ Վանի արշավախումբը» (նյութեր):

Կարծիքներ. Ն. Ադոնցի, Ա. Ալիխանյանի, Ա. Թումանովի, Ի. Կուսիկյանի, Գ. Հովսեփյանի, Ռ. Շահումյանի, Օ. Սողոմոնյանի, Ս. Տեր-Ավետիսյանի, Ա. Քալանթարի, Հ. Օրբելու գիտական աշխատանքների եւ անձնական հատկանիշների վերաբերյալ:

Հայագիտության համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաեւ **Նամակների № 2-3 հավաքածուները**. *դրանք ընդգրկում են Մառի գրած (բնականաբար պահպանվել են սակավ թվով) եւ նրան գրված նամակները: Մառի նամակներից պահպանվել են միայն Կ. Կոստանյանցին գրվածները: Մինչդեռ Մառին հասցեագրված նամակների մեջ հանդիպում ենք հետեւյալ անուններին՝ Ա. Աբեղյան, Մ. Աբեղյան, Ա. Աճեմյան, Ն. Ադոնց, Ն. Ակինյան, Հ. Աճառյան, Ա. Բաբախանյան, Լ. Բաշինջաղյան, Մ. Բարխուդարյան, Վ. Գաբինյանց, Ու. Զոհրաբյան, Թ. Թորամանյան, Ա. Իսահակյան, Ե. Լալայան, Գ. Խալաթյանց, Ա. Խաչատրյան, Ս. Կանայան, Կ. Կոստանյանց, Օ. Կոստանյանց, Ա. Հովհաննիսյան, Գ. Հովսեփյան, Գ. Ղափանցյան, Ս. Մալխասյան, Հ. Մանանդյան, Լ. Մելիքսեթ-Բեկ, Լ. Մսերյանց, Ա. Շահնազարյանց, Գ. Պիչիկյան, Տարագրոս, Ս. Տեր-Ավետիսյան, Ե. Տեր-Հարությունյանց, Գ. Տեր-Մկրտչյան, Մ. Տեր-Մովսեսյան, Տ. Տեր-Վարդանյանց, Ս. Տիգրանյան, Ա. Քալանթար, Հ. Օրբելի:*

Ուշագրավ տվյալներ են առկա նաեւ **Կենսագրական նյութերի № 4 հավաքածուում**, *որոնք տեղեկատվական, արձանագրական բնույթի են եւ այսպես թե այնպես վերաբերում են Հայաստանին: Դրանց թվում են՝ «Հայկական բանահյուսություն» (ուսծրագիր), «Հայերեն եւ վրացերեն» (Լազարյան ճեմարանի/Առաջավորասիական ինստիտուտի համար նախատեսված դասախոսությունների ծրագրեր), «Տեղեկատվություն Ռուսաստանի գիտությունների ակադեմիային՝ Անիի հնագիտական ինստիտուտի հիմնադրման մասին», «Լազարյան ճեմարանի՝ Առաջավորասիական ինստիտուտ վերածելու եւ ուսծրագրերի փոփոխության վերաբերյալ նյութեր, 1916-1919 թթ.», «Ռուսաստանի հնագիտական ընկերության արձանագրությունները Ն. Մառի՝ Վանի արշավախմբում մասնակցության վերա-*

բերյալ», «Ռուսական պետական հնագիտական հանձնաժողովի նյութեր՝ Ն. Մառին Անի պեղումների գործուղելու մասին, Ն. Մառի հաշվետվությունը Արմավիրի պեղումների վերաբերյալ, 1899 թ., Գրություն Անիի հնագիտական ինստիտուտի ստեղծման մասին, 1910 թ.», «Վաղարշապատի պեղումների մասին. աշխատանքային պլան՝ կազմված Ն. Մառի կողմից, 1931 թ.», Գրություններ՝ «Հայագիտության վիճակը Ռուսաստանում եւ արտերկրում», «Հայ եւ վրաց արձանագրությունների հավաքածուի հրատարակման առիթով», «Անիի պահպանության խնդրի կապակցությամբ», «Վրաստանի եւ Հայաստանի աշխարհագրական անունների տառադարձման վերաբերյալ», «Գ. Ա. Էզովի արխիվը Հայաստանին տրամադրելու մասին»:

Հայագիտությանը վերաբերող նյութեր կան նաեւ **Այլոց աշխատանքների № 6 հավաքածուում,** *որտեղ առկա են հիմնականում աշակերտների եւ գործընկերների (Ն. Ադոնց, Լ. Բաշինջաղյան, Ռ. Մ. Շահումյան, Ա. Քալանթար, Հ. Օրբելի) գիտական աշխատանքները:*

Լուսանկարների № 8 հավաքածուում *պահպանվել են հայկական տարբեր ձեռագրերի լուսանկարներ, որոնք արվել են Հայաստանում եւ նրանից դուրս Մառի կատարած ձեռագրագիտական հետազոտությունների ընթացքում:*

Վերոհիշյալ նյութերի միայն փոքր մասն է նախկինում հրատարակվել, որոնց թվում՝ որոշ հաշվետվություններ[21]*, հոդվածներ*[22] *եւ նամակներ*[23]*:*

---

[21] **К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра о раскопках в Ани (1892 г.), ВОН, 1981, № 5, էջ 99-110. **К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра о раскопках в Ани (1893 г.), ВОН, 1981, № 6, էջ 98-114. **К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра о раскопках в Ани (1904-1907 гг.), ВОН, 1981, № 10, էջ 99-114. **К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра в Археологическую комиссию (1909-1915 гг.), ВОН, 1982, № 2, էջ 83-92. **К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра о разведочной раскопке Двина в 1899 г., ВОН, 1982, № 4, էջ 92-97. **О. Баликян, К. Пескарева,** Докладные записки Н. Я. Марра об армянской и грузинской эпиграфике, Вестник архивов Армении, 1984, № 3, էջ 39-50:

[22] **Н. Я. Марр,** К вопросу об "Арк'ауне", ИАН, 1964, № 12, էջ 49-59 (վերահրատակված՝ **П. М. Мурадян**, Кавказский культурный мир и Армения, вып. II, Ереван, 2012, էջ 291-294). **Н. Я. Марр,** Цаты палеонтологически, в кн.: Марр и вопросы арменоведения, Ереван, 1968, էջ 195-204. **Н. Я. Марр,** Древнеармянский алфавит и сирийское письмо, ИФЖ, 2005, № 2, էջ 30-57 (հրատարակության է պատրաստել Պ. Մուրադյանը):

[23] **Ա. Սարգսյան,** Երվանդ Լալայանի կյանքն ու գործունեությունը արտացոլող փաստաթղթեր, ԲՀԱ, 1963, թ. 1, էջ 131-139. **Պ. Հ. Հակոբյան,** Գալուստ Տեր-Մկրտչյանի նամակները Նիկողայոս Մառին, Մառը եւ հայագիտության հարցերը, Երեւան, 1968, էջ 205-265. **Պ. Հ. Հակոբյան,** Նիկողայոս Ադոնցի նամակներից, ԼՀԳ, 1975, թ. 11, էջ 83-111 (Ադոնց-Մառ նամակները Ս. Պետերբուրգում են եւ Բեյրութում. տես **Պ. Հովհաննիսյան,** Նիկողայոս Ադոնցի անտիպ հուշերը ուսուցչապետ Նիկողայոս Մառի մասին, Ակադեմիկոս Նիկողայոս Մառ. ծննդյան 140 եւ մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, Երե-

Լուսանկարչական արխիվը. Նյութական մշակույթի պատմության ինստիտուտը եղել է Մառի հիմնական աշխատավայրը. Ռուսական կայսերական հնագիտական հանձնաժողովի (1859 թ.) հիման վրա նախ ստեղծվել է Նյութական մշակույթի պատմության ռուսական ակադեմիան (1919 թ.), որը վերածվել է Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի (1919 թ.), ապա՝ Նյութական մշակույթի պատմության ինստիտուտի (1937 թ.), Հնագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի (1959 թ.) եւ նորից՝ Նյութական մշակույթի պատմության ինստիտուտի (1991 թ.): Ինստիտուտն ունի ձեռագրային եւ լուսանկարչական արխիվներ, որոնք 2004-ից նույն արխիվի երկու ենթաբաժիններն են[24]:

ան, 2005, էջ 145). **П. М. Мурадян,** Переписка Н. Я. Марр - И. А. Орбели, Переписка Н. Я. Марр - Л. З. Мсерянц, Арменоведческие исследования, т. I, Ереван, 1974, էջ 229-402 (Լ. Մսերյանցի եւ Մառի հարաբերությունների վերաբերյալ հմմտ. նաեւ "Материалы к научной биографии акад. Н. Я. Марра", КВ, 1988, № 6, էջ 276-290): Նշենք, որ հրապարակվել են նաև Հայաստանում գտնվող որոշ նամակներ, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում (Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցիների ունեցվածքի կառավարման խորհուրդին Անիի կապակցությամբ ուղղված նամակներ՝ **С. Мирзоян,** Письма Н. Я. Марра об археологических раскопках в Ани (1904-1917), ВОН, 1979, N 12, էջ 93-108), Մատենադարանի արխիվում (**Ա. Աբրահամյան,** Մառի՝ Գ. Տեր-Մկրտչյանին ուղարկած անտիպ նամակները, «Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ», 1945, թ. 1, էջ 72-125. **Ա. Ադամյան**, Նիկոլայ Յակովլեվիչ Մառի անտիպ նամակները [Գ. Հովսեփյանին], ԲՀԱ, 1964, թ. 1, էջ 65-82. **Ա. Ադամյան**, Ն. Յա. Մառի նամակներից [Գ. Հովսեփյանին, Տիրայր վարդապետին, Բ. Վարդազարյանին, Ն. Բյուզանդացուն], ԲՀԱ, 1968, թ. 1, էջ 87-100. **Ա. Ադամյան**, Գարեգին Հովսեփյանի նամակները Ն. Մառին, ԲԵՀ, 1969, թ. 3, էջ 164-175), Գրականության և արվեստի թանգարանում (**Պ. Ե. Սիմոնյան,** Ն. Յա. Մառի անտիպ նամակներից [Մ. Բարխուդարյանին], ՊԲՀ, 1963, թ. 4, էջ 175-182): Բացի Մ. Բարխուդարյանին գրված նամակներից ԳԱԹ-ի համապատասխան ֆոնդերում են գտնվում Մառի անտիպ նամակները ուղղված Ալ. Երիցյանին, Գր. Խալաթյանին, Լեոյին, Գ. Լևոնյանին, Կարա Մուրզային, Կ. Կոստանյանին, Հ. Կուսիկյանին, Խ. Հովհաննիսյանին, Գ. Հովսեփյանին, Ս. Շահազիզին: Այստեղ են նաև Հ. Թումանյանի մի նամակը Մառին, ինչպես նաև Մառի՝ «Իմ ուսանող Վ. Տերյանի հիշատակին» ու «Ընձենավորի թարգմանության առթիվ» գրվածքները:

[24] Հաստատության պատմության եւ կառուցվածքի մասին տես **В. М. Массон,** Институт истории материальной культуры, Санкт-Петербург, 1997. հմմտ. նաեւ **Н. И. Платонова,** Российская Академия истории материальной культуры: этапы становления (1918-1919 гг.), СА, 1989, № 4, с. 5-16. արեւելագիտության զարգացման համատեքստում տես **Г. В. Длужневская,** Деятельность Академии истории материальной культуры в области востоковедения в 1919-1940 гг., Восточный архив, 2006, № 14-15, էջ 128-138: Նույն հաստատության ձեռագրային արխիվի նկարագրության համար տես **Н. А. Белова,** Перечень материалов экспедиций и раскопок в фонде Императорской Археологической комиссии рукописного отдела Научного архива Института истории материальной культуры РАН, Приложение. Императорская Археологическая комиссия (1859-1917): К 150-летию со дня основания. У истоков отечественной археологии и охраны культурного наследия, Санкт-Петербург, 2009, էջ 12-140:

Նկ. 3. Գեղամա լեռներ, Բոզլի-Բուլաղ-Յուրտ, Մառը քարակոթողի մոտ, 1911 թ., ՌԳԱ ՆՄՊԻ, ֆ. 23, նկ. Q. 560-39

Նկ. 4. Գեղամա լեռներ, Գյոլ-Յուրտ, Հետազոտական արշավախմբի ներկայացուցիչը եւ քուրդ վրանաբնակները քարակոթողի մոտ, 1910 թ., ՌԳԱ ՆՄՊԻ, ֆ. 23, նկ. Q. 560-30

Նկ. 5. Գեղամա լեռներ, Գյոլ-Յուրտ, եկեղեցու/սրբավայրի ավերակներ, 1912 թ.,
ՌԳԱ ՆՄՊԻ, ֆ. 23, նկ. Զ. 560-36

Նկ. 6. Գեղամա լեռներ, Թոխմախան-Գյոլ, սյան հիմք ջրավազանի մոտ,
ՌԳԱ ՆՄՊԻ, ֆ. 23, նկ. Օ. 1069-10

Լուսանկարչական արխիվը հիմնվել է 1919 թ., արդի տեսքով ձեւավորվել 1937 թ.: Այստեղ պահվում են մոտ 900.000 միավորներ, որոնք վերաբերում են 1850-2011 թթ. եւ, ի թիվս այլոց, ներառում են Հայաստանին վերաբերող լուսանկարներ/նեգատիվներ՝ արված ԺԹ.-Ի. դդ. սահմանի հայտնի լուսանկարիչներ Մ. Փափազյանի, Օ. Քյուրքչյանցի, Դ. Երմակովի, ինչպես նաեւ Մառի աշակերտների եւ գործընկերների (Լ. Գյուզալյան, Բ. Պիոտրովսկի, Ն. Տոկարսկի, Հ. Օրբելի) կողմից[25]: Մառին է վերաբերում ֆոնդ № 23-ը, որն ընդգրկում է 1876-1933 թթ. լուսանկարները[26]: Դրանք բաղկացած են միավորներից, որոնք ա. ուղղակիորեն առնչվում են Մառի աշխատանքներին, բ. իրականացված են Մառի հանձնարարությամբ, գ. կապված են այլ հետազոտողների գործունեության հետ, դ. անվանի լուսանկարիչների լուսանկարներ են: Հավաքածուն ընդհանուր առմամբ ներառում է 1969 նեգատիվ, 3675 պոզիտիվ (տպված լուսանկար) եւ 510 դիապոզիտիվ:

Հայտնի է, որ Մառն անցել է լուսանկարչական կուրսեր եւ անձամբ է նկարել. մասնավորապես հստակ է, որ 1892-1893 թթ. Անիի պեղումների, ինչպես նաեւ Աֆոն եւ Սինայ (1898, 1902 թթ.) կատարած այցելությունների ընթացքում նա անձամբ է օգտագործել խցիկը[27]: Մյուս դեպքերում մասնակցել են հրավիրված լուսանկարիչներ (որոնց թվում՝ Ա. Վրույրը, Ն. Սիչեւան, Կ. Ռոմանովան եւ այլք):

Աղ. 2-ում բերված է № 23 ֆոնդի հիմնական բովանդակությունը. բացի այդ, արխիվում կա նաեւ «Պերսոնալիա», որ թվագրվում է 1890-1934 թթ. եւ ընդգրկում է Մառի անհատական լուսանկարները (իրա-

---

[25] Լուսանկարչական արխիվի մասին տես. **Т. Девель,** Обозрение коллекций собрания фотоархива Института истории материальной культуры им. Н. Я. Марра АН СССР, СА, 1950, № 12, էջ 289-336. **Г. В. Длужневская,** Историко-археологическое наследие азиатской России в фотодокументах второй половины XIX - первой половины XX в. (по фондам научного архива Института истории материальной культуры Российской Академии наук), Автореферат док. дис., Санкт-Петербург, 2008. **Г. В. Длужневская,** Фонды фотоархива Института истории материальной культуры РАН, Восточный архив, 2013, № 2, էջ 79-89. **Г. В. Длужневская,** Фонды фотоархива Института истории материальной культуры РАН, Восточный архив, 2014, № 1, էջ 84-95. **Г. В. Длужневская,** Историко-археологическое наследие азиатской России, էջ 22-23. **Г. В. Длужневская,** Археологические исследования в Европейской части России и на Кавказе в 1859-1919 гг., Санкт-Петербург, 2014.

[26] Մանրամասնների համար հմմտ. **Т. Девель,** Обозрение коллекций собрания фотоархива, էջ 316-318. **Т. Девель, Д. Томес,** Собрание Н. Я. Марра в фотоархиве ленинградского отделения Института археологии АН СССР, էջ 289-295. **Г. В. Длужневская,** Фонды фотоархива Института истории материальной культуры, 2014, էջ 86-87. **Г. В. Длужневская,** Археологические исследования в Европейской части России, էջ 26-29:

[27] **Т. Девель, Д. Томес,** նշվ. աշխ., էջ 290. հմմտ. **К. Пескарева, О. Баликян,** Докладные записки Н. Я. Марра, ВОН, 1981, № 5, էջ 101. **Н. И. Платонова,** նշվ. աշխ., էջ 380:

կանացված դաշտային եւ կաբինետային պայմաններում), ինչպես նաեւ՝ թաղման արարողությունը[28]*: Պետք է նշել, որ լուսանկարների առյուծի բաժինը վերաբերում է Հայաստանին, որտեղ իր հիմնական գործունեությունն է ծավալել գիտնականը*[29]*:*

Բնագավառը	Աշխարհագրությունը եւ բովանդակությունը	Ժամանակագրությունը	Քանակը
Պեղումներ	Անի (տեղանք, պեղումների ընթացք, հուշարձաններ, կենցաղ)	1892-1893, 1904, 1906-1913	Դ-337, ԴՆ-210, Ն-540, Լ-434
	Ոռնակ (տեղանք, հնագիտական նյութեր)	1893	Լ-28, Ն-12
	Արդաշարի Բերդ ամրոց (= Դվին, *Ա.Բ.*) (գտածոներ)	1899	Ն-2
	Գառնի (տեղանք, տաճարի տարբեր հատվածներ)	1909-1910	Դ-65, Լ-9, Ն-3
	Վան, Թոփրաք-քալե, Հայկաբերդ (տեղանք, հուշարձաններ)	1916	Դ-18, ԴՆ-82, Լ-274, Ն-166
Գործուղումներ	Ագարակ, Ադիաման, Ախթալա, Այրիվանք, Արմավիր, Արթիկ, Բագարան, Բագնայր, Գառնի, Գեղարդ, Դսեղ, Դվին, Երվանդակերտ, Թալին, Խծկոնք, Խոր Վիրապ, Կոբայր, Հաղարծին, Հաղպատ, Հնավանք, Լմբատ, Մաղասաբերդ, Մրեն, Շիրակավան, Պտղնի, Տեկոր, Տիգնիս, Ուզունլար, Օղուզլու (տեղանք, հուշարձաններ)	1892-1893	Լ-178, Ն-175
	Աֆոնի Իբերյան եւ Սինայան վանքեր (վրաց եւ արաբ ձեռագրեր)	1898, 1902	Լ-108, Ն-14
	Շավշիա եւ Կղարջք (հուշարձաններ, ազգագրական նյութ)	1904	Լ-45, Ն-46
	Բանա, Երերույք, Տեկոր (տեղանք, հուշարձաններ)	1907-1908	Դ-26, ԴՆ-28, Լ-23
	Գեղամա լեռներ (տեղանք, վիշապներ, խաչքարեր, քրդեր)	1908-1912	Լ-83, Ն-21
	Երեւան (Սարդարի պալատի ավերակներ)	1911	Լ-1
	Սվանեթի (տեղանք, հուշարձաններ)	1913	Ն-14
	Շիրակավան, Բաշ-շորագյալ (հուշարձաններ, խեցանոթներ)	1913	Դ-2, ԴՆ-է, Լ-1
	Թուրքիա, Հունաստան (Անկարայի թանգարանի հունահռոմեական գերեզմանաքարեր, Աթենքի թանգարան, հնություններ Կրետեից, Պերգամոն, տեսարաններ Չանակկալեից եւ Հիսարլիկից, հունական արձանագրություններ Զմյուռնիայից, լուսանկարիչ Գեորգիադիի՝ Միստրայի միջնադարյան հուշարձանների ալբոմը)	1933	Լ-375

[28] **Г. В. Длужневская,** Фонды фотоархива Института истории материальной культуры, 2014, с. 86.

[29] Հայաստանին վերաբերող առանձին լուսանկարներին անդրադարձ է կատարվել այս աշխատանքներում՝ **Т. Девель,** Обозрение коллекций собрания фотоархива, էջ 317. **Т. Девель, Д. Томес,** նշվ. աշխ., էջ 293. **Г. В. Длужневская,** Историко-археологическое наследие, էջ 23. **Г. В. Длужневская,** Фонды фотоархива, էջ 87:

Հանձնարարականներ	Հ. Օրբելուն (Աղթամարի, Բայբուրթի, Էրզրումի, Վանի, Վարագի, հուշարձաններ, խալդյան սեպագրեր)	1911-1912	Լ-40
	Հ. Օրբելուն եւ Ա. Քալանթարին (Շիրակավանի, Օձունի հուշարձաններ)	1913-1914	Լ-48
	Ս. Տեր-Ավետիսյանին (Աղթամարի, Զիվիստանի, Խոյի, Կարմրավորի, Ոստանի, Վանի, Վարագի հուշարձաններ, խալդյան եւ հայերեն վիմագրեր, մանրանկարներ)	1915-1916	Լ-122, Ն-145
	Ն. Օկունեւին (Բայբուրթի, Բանայի, Դորթ Քիլիսեի, Երզնկայի, Էրզրումի, Իշխանի, Խախի, Կարսի, Հասան Կալայի, Մամախաթունի, Մցխեթի, Պետերեկի, Սպերի հուշարձաններ)	1917	Լ-427, Ն-427
Այլ նյութեր	Վերաբերում են՝ 1. Մառի առանձին աշխատանքներին (խալդյան եւ հայկական վիմագրություն, աղվանական գրեր, վրացական ձեռագրեր), 2. այլ հետազոտողներին (Ա. Ամիրանիշվիլի, Դ. Գորդեեւ, Խ. Դաղյան, Թ. Թորամանյան, Դ. Դիփշիձե, Գ. Զուբինով, Վ. Սիսոեւ, Յ. Սմիռնով, Ե. Տակաիշվիլի, , Ն. Տիխոնով, Ի. Տկելաիշվիլի, Հ. Օրբելի) եւ նրանց այցելած հուշարձաններին, 3. հայտնի նկարիչներին (Դ. Երմակով, Ա. Պաստուխով, Հ. Քյուրքյան,)՝ Հայաստանին եւ Վրաստանին առնչվող նկարներով	1876-1930	Լ-376, Ն-147

Աղյուսակ 2.

Ս. Պետերբուրգի Նյութական մշակույթի պատմության ինստիտուտի լուսանկարչական արխիվի Ն. Մառի № 23 ֆոնդը. Հապավումներ՝ Դ - դիապոզիտիվ, ԴՆ - դիապոզիտիվային նեգատիվ, Լ - լուսանկար, Ն - նեգատիվ

Վերոհիշյալ լուսանկարների չնչին հատվածն է միայն հրապարակված Մառի, նրա աշակերտների, աշխատակիցների եւ այլ ուսումնասիրողների աշխատանքներում[30]: Հիմնական մասը սպասում է իր հետազոտողին:

Եզրակացություն. Հայտնի կովկասագետ-հայագետ Նիկողայոս Մառի հրատարակած աշխատանքների քանակը մոտենում է 600-ի: Սակայն, Մառն ունի նաեւ բազմաթիվ չհրատարակված նյութեր, որոնք պահվում

[30] Հմմտ. **Н. Марр,** Ереруйкская базилика, Санкт-Петербург, 1907. **Н. Марр, И. Орбели,** Археологическая экспедиция 1916 года в Ван, Санкт-Петербург, 1922. **Н. Я. Марр, Я. И. Смирнов,** Вишапы, Ленинград, 1931. **Н. Я. Марр,** Ани, Москва-Ленинград, 1934 (ռուսերեն վերահրատարակությունը՝ Երեւան, 2011, Հ. Մելքոնյանի եւ Գ. Սարգսյանի նախաբանով). **Д. А. Кипшидзе,** Пещеры Ани, Ереван, 1972. **И. А. Орбели,** Памятники армянского зодчества на острове Ахтамар, Избранные труды, т. 1, Москва, 1968. **А. Е. Мусин,** Императорская археологическая комиссия (1859-1917), Санкт-Петербург, էջ 694-702. հմմտ. նաեւ **Ստ. Մնացականյան,** Նիկողայոս Մառը եւ հայկական ճարտարապետությունը, Երեւան, 1969. **Ա. Վրույր,** Անիում, Երեւան, 1979:

են սանկտ-պետերբուրգյան երկու հաստատություններում՝ Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի արխիվի սանկտ-պետերբուրգյան բաժանմունքում (ձեռագրային արխիվը՝ ֆոնդ 800, որը բաղկացած է ձեռագրերից, նամակներից, կենսագրական նյութերից, այլ հեղինակների աշխատանքներից) եւ Նյութական մշակույթի պատմության ինստիտուտում (լուսանկարչական արխիվը՝ ֆոնդ 23, որը բաղկացած է դիապոզիտիվներից, դիապոզիտիվային նեգատիվներից, լուսանկարներից, նեգատիվներից): Դրանց զգալի մասը վերաբերում է հայագիտության տարբեր բնագավառներին (պատմություն, հնագիտություն, բանասիրություն, ձեռագրագիտություն, վիմագրագիտություն), որոնց հետազոտությունը կարող է բազմաթիվ ճշտումներ մտցնել տարբեր խնդիրների լուսաբանման գործում: Բացի այդ, ձեռագրային արխիվում պահպանվել են տարբեր հայագետներին (Ն. Ադոնց, Գ. Հովսեփյան, Գ. Ղափանցյան, Հ. Օրբելի, եւ այլք) վերաբերող նյութեր (աշխատանքներ, նամակներ, կենսագրականներ, կարծիքներ), որոնք լուսաբանում են Ի. դարասկզբի հայագիտության զարգացման միտումները: Սույն հաղորդման նպատակն էր ընդհանուր գծերով ներկայացնել Մառի արխիվի հայագիտական ներուժը եւ հետազոտողների ուշադրությունը հրավիրել դրա հետագա ուսումնասիրությունը կազմակերպելու վրա:

РЕЗЮМЕ

Архив Н. Я. Марра хранится в двух петербургских учреждениях - в Санкт-Петербургском филиале архива Российской академии наук (Рукописный архив, фонд № 800) и в Институте истории материальной культуры (Фотоархиф, фонд № 23). Значительная часть материалов касается разных областей арменоведения (история, археология, филология, археография, эпиграфика), исследование которых внесет многочисленные уточнения в освещение разных вопросов. Кроме того, в рукописном архиве находятся материалы (работы, письма, биографии, отзывы), касающиеся разных арменоведов (Н. Адонц, Г. Овсепян, Г. Капанцян и др.), которые освещают тенденции развития арменоведения в начале XX века. Цель данной статьи в общих чертах представить арменоведческий потенциал архива Марра и обратить внимание исследователей на его дальнейшее исследование.

SUMMARY

The archive of N. Y. Marr is currently kept in two institutions of St. Peterburg: in the St. Petersburg Branch of the Archive of the Russian Academy of Sciences (Manuscript archive, Collection № 800) and in the Institute of History of Material Culture (Photo-archive, Collection № 23). An essential part of the materials relates to various spheres of Armenian Studies (history, archaeology, philology, archaeography, epigraphy), the research of which could contribute to elucidation of different problems. Besides, materials (works, letters, biographies, recommendations) related to different armenologists (N. Adonts, G. Hovsepyan, G. Kapantsyan, H. Orbeli, et al.) have been preserved in the manuscript archive, which reveal the tendencies of development of Armenology at the beginning of the 20th century. The aim of the present report is to introduce the armenological potential of Marr's archive in general terms and to call researchers' attention to its further study.